«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«11» 08 2014թ.

Հաստատում եմ
Գնումների աջակցման կենտրոնի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
Հ. Թունյան

N ԳԲԽ 28/14 բողոքը քննող
հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից 24.07.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1. «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ՝ նաև Կենտրոն) 24.07.2014թ. ներկայացված բողոքով «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) հայտնել է, որ մասնակցել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հայտարարված «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգին: Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով որպես ընտրված մասնակից ճանաչված «Շինարար Գագիկ» ՍՊԸ-ին առաջարկվել է ծավալաթերթ-նախահաշվում շտկել

թվաբանական անճշտությունը: «Շինարար Գագիկ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժվել է՝ սահմանված ժամկետում անճշտությունը շտկելու մասին համաձայնություն չստանալու հիմքով: Այնուհետև 2-րդ չափաբաժնի մասով ներկայացրած գնային առաջարկների հիման վրա 2-րդ տեղ զբաղերած մասնակիցը՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն, սահմանված ժամկետում չի ներկայացրել մասնակցի որակավորումը հիմնավորող փաստաթղթերը և վերջինիս հայտը նույնպես մերժվել է:

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ պատվիրատուն Ընկերությունից չի պահանջել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընկերությունը գտնում է, որ պատվիրատուի կողմից խախտվել են գնումների մասին ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերը:

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն խնդրել է «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի արդյունքում օրենքով սահմանված կարգով պարտավորեցնել Պատվիրատուին ծանուցել «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին՝ վերջինիս որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին:

2. ՀՀ կառավարությանն անոընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը և հիմնավորումները.

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 29.07.2014թ. N 05/032-1287 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեին՝ խնդրելով կարծիք տալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում 24.07.2014թ. «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի վերաբերյալ:

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն 06.08.2014թ. N ՎՀ/13/5156-14 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից կազմակերպված «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնային առաջարկների հիման վրա 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին, armeps.am կայքի միջոցով, ոչ ավտոմատ ծանուցմամբ, 2014 թվականի մայիսի 30-ի թիվ ԱԱ/13/3252-14 գրությամբ ներկայացվել է ծանուցում՝ բաց ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցի որակավորման չափանիշների համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու մասին:

3. ԳԲԽ-28/14 բողոքի վերաբերյալ էական նշանակություն ունեցող փաստերը, ԳԲԽ-28/14 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումները.

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի 24.07.2014թ. ներկայացրած բողոքը, գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 27.05.2014թ. N 3 և 06.06.2014թ. N 4 արձանագրությունները, ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) Կենտրոնին ներկայացրած 06.08.2014թ. N ՎՀ/13/5156-14 գրությունը, հայտում է հետևյալը.

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանման վարչական շենքի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ):

Գնահատող հանձնաժողովի 27.05.2014թ. N 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ որոշում է կայացվել ներկայացված գնային առաջարկների հիման վրա 2-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին, ծանուցել մասնակցի որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին:

Հանձնաժողովի 06.06.2014թ. N 4 արձանագրության 1-ին կետի 1.3 ենթակետի համաձայն՝ 2-րդ չափաբաժնի մասով ներկայացրած գնային առաջարկների հիման վրա 2-րդ տեղը զբաղեցրած մասնակիցը՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն, սահմանված ժամկետում չի ներկայացրել մասնակցի որակավորումը հավաստող փաստաթղթերը:

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն 24.07.2014թ. Կենտրոնին ներկայացրած բողոքով հայտնել է, որ Պատվիրատուի կողմից «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին որպես ընտրված մասնակից ճանաչելու վերաբերյալ ծանուցում չի ուղարկվել և Ընկերությունից չի պահանջվել ներկայացնել Ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորումը հավաստող փաստաթղթեր:

«Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ն հայտնել է նաև, որ գնահատող հանձնաժողովի կողմից խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին և 7-րդ մասերը:

Պատվիրատուն 06.08.2014թ. Կենտրոնին ներկայացրած N ՎՀ/13/5156-14 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից

կազմակերպված «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի շրջանակներում ներկայացված գնային առաջարկների հիման վրա 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին, armeps.am կայքի միջոցով, ոչ ավտոմատ ծանուցմամբ, 2014 թվականի մայիսի 30-ի թիվ ԱԱ/13/3252-14 գրությամբ ներկայացվել է ծանուցում՝ բաց ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցի որակավորման չափանիշներին համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու մասին:

Կենտրոնի նախաձեռնությամբ, 08.08.2014թ. ժամը 15:00-ին կազմակերպված քննարկման ընթացքում, Ընկերության ներկայացուցիչը ամբողջությամբ պնդեց իր կողմից ներկայացված բողոքը:

Պատվիրատուի ներկայացուցիչը հայտնեց, որ ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին armeps.am կայքի միջոցով ոչ ավտոմատ եղանակով 2014 թվականի մայիսի 30-ի թիվ ԱԱ/13/3252-14 գրությամբ ներկայացվել է ծանուցում՝ բաց ընթացակարգի հրավերով պահանջվող մասնակցի որակավորման չափանիշների համապատասխանությունը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու մասին, սակայն չի կարող ներկայացնել որևէ ապացույց ծանուցումը «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին ուղարկելու և վերջինիս կողմից ստացված լինելու վերաբերյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 31-րդ հոդվածի՝

- 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:
- 7-րդ մասի համաձայն՝ հայտը անբավարար գնահատվելու դեպքում հանձնաժողովը փաստաթղթերը ներկայացնելու պահանջ է առաջադրում հաջորդ տեղը զբաղեցրած մասնակցին:

ՀՀ կառավարության 05.12.2013թ. N 1370-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային ձևով գնումների կատարման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 26-րդ կետի համաձայն՝ բաց ընթացակարգի կիրառման դեպքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին՝ գնահատող հայտերի գնահատման արդյունքների հաստատման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում ոչ ավտոմատ եղանակով ծանուցում է՝ վերջինիս որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու մասին:

Կենտրոնի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ էլեկտրոնային գնումների armeps համակարգը սպասարկող info@armeps.am էլեկտրոնային փոստում առկա չէ 30.05.2014թ. ԱԱ/13/3252-14 ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի գրությունը 30.05.2014թ. մինչև 06.06.2014թ. «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգով ուղարկված լինելու վերաբերյալ որևէ ոչ ավտոմատ ծանուցում:

Այսպիսով, թեև գնահատող հանձնաժողովի 27.05.2014թ. N 3 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ որոշում է կայացվել ներկայացված գնային առաջարկների հիման վրա 2-րդ չափաբաժնի մասով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ին, ծանուցել մասնակցի որակավորումը հավաստող փաստաթղթեր ներկայացնելու մասին, սակայն Պատվիրատուն սահմանված կարգով որակավորումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելու ծանուցում չի ուղարկել բողոքաբեր Ընկերությանը:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետն՝ առաջարկում ենք «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի կողմից 24.07.2014թ. «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին ներկայացված բողոքը բավարարել մասնակի. դադարեցնել «ՀՀ ԿԱԱԳԿՊԿ-ԲԸԱՇՁԲ-14/2» ծածկագրով բաց ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2014թ. կայացած նիստի N 4 արձանագրության 1-ին կետի 1.3 ենթակետով «Էլիտ Հիլզ» ՍՊԸ-ի որակավորման փաստաթղթերը ներկայացված չլինելու և հայտը մերժելու մասին որոշումը:

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի գլխավոր մասնագետ՝ ԳԲԽ-28/14 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար Լ. Հովակիմյան